

# ԽՆՁՈՐԸ ԵՒ ՈՐԴԸ



# ԿԿՈՒ

## Մանկապատանեկան Թերթիկ

ՅՈՒՆՈՒԱՐ Բ - 2024  
Թիւ - 2 -



Թիւր պատրաստեց՝  
Մարտին ԿՈՏԵՆ-ՇԱՀԻՆԵՆ  
Նկարազարդեց՝  
ՌԱՅՅԻ ԲԷՇԵՆԸ

Մայրիկը սեղանին վրայ դրաւ շքեղ խնձորներու աման մը: Գեղեցիկ, կարմիր, կանաչ-դեղին խնձորներ, փայլուն կեղեւով:

- Մայրի՛կ, հատ մը կրնա՞մ առնել,- հարցուց Արփին:

- Ա՛ն, ձագո՛ւկս,- ըսաւ մայրը:  
Նորէն հարցուց.

- Կրնա՞մ խածնելով ուտել, մայրի՛կ, այնքան գեղեցիկ են, որ մեղք է դանակով կտրել:

- Շատ լաւ,- ըսաւ մայրիկը,- կե՛ր ինչպէս կ'ուզես:

Արփին ուժով մը խածաւ, բայց դուրս հանեց խածուած կտորը բերնէն, զգուանքի շարժումով մը:

- Մայրի՛կ, որդ կայ մէջը:

- Իրա՛ւ, ցաւալի է: Կը տեսնե՞ս, որ կարելի չէ բանի մը երեւոյթին վստահիլ, պէտք չէ արտաքինէն դատել: Արփին խնձորը առաւ ու վազեց հայրիկին քով:

- Հայրի՛կ, ինչպե՞ս կարելի է որ այս գեղեցիկ ու առողջ խնձորին մէջ որդ մը ըլլայ:

- Գարնան,- բացատրեց հայրը,- երբ խնձորենին բոլորովին ծաղկած կ'ըլլայ, թիթեռնիկներու տեսակներ կան, որոնք մէկ ծաղիկէն միւսը կը թռչկոտին: Այդ թիթեռնիկները իրենց հաւկիթները դնելու տեղ կը փնտռեն ու կը գտնեն ծաղիկներուն ճիշդ կեդրոնը, այն մասը, որ պտուղ պիտի կազմէ: Այսպէս թիթեռնիկին հաւկիթը կը մտնէ պտուղին մէջ, եւ դուն որդ մը կը գտնես՝ առանց դուրսէն նշան մը տեսնելու:

- Հապա՞ եթէ մէջը մնար:



- Մէջը պիտի մնար, մինչեւ որ թիթեռնիկ մը ձեւանալով ծակեր ու դուրս ելլեր...

### ՀԵՏԱԲԵՐՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԾԱՌԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ...

\* Ֆիսկալ տայի մէջ անտառները կը զբաղեցնեն երկրի տարածքին 70 տոկոսը, մինչդեռ Մեծ Բրիտանիոյ մէջ՝ ընդամենը 6 տոկոսը:

\* Բոլոր ծառերը անվտանգ չեն. Մանցինելա ծառին պտուղին հիւրը թունաւոր է, իսկ անոր խոնաւութենէն բարձրացած շոգին կրնայ բացասաբար ազդել աչքերուն եւ շնչառութեան:

\* Հիւսիսային բեւեռը կ'աճի սոճիներու աւելի քան 100 տեսակ, իսկ Հարաւային բեւեռը մինչեւ վերջերս միայն 1 տեսակ կար (սոճի՝ արիեստականօրէն տնկուած անտառներ):


\* Պրագիլի մէջ կ'աճի «քարիւղատու» անունով ծառ մը, որուն պտուղին հիւրին քիմիական բաղադրութիւնը գրեթէ ոչինչով կը տարբերի մագլթի բաղադրութենէն:

\* Երկրի փշատերեւ (սնոպար) ծառերուն գրեթէ կեսը Ռուսիոյ մէջ կ'աճին:


\* Իւրաքանչիւր ծառ իր ողջ գոյութեան ընթացքին կը կլանէ շուրջ 1 թոն ածխաթթու կազ:

\* Իբրեւ համեմունք օգտագործուող կասիան կը ստանան Հարաւային Բեւեռի ծառերուն չորցած կեղեւներէն, որոնք կ'աճին Հնդկաստանի եւ Սրի Լանքայի մէջ:

\* Աշխարհի ամենամեծ ծառը կը կոչուի Ժեներալ Շերման: Ան կանգնած է Զալիֆորնիոյ մէջ: Ծառին բարձրութիւնը մօտ 84 մէթր է: Ան աննուազն 2300 տարեկան է:



Թիւերը յաջորդաբար միացնելով, ամբողջացո՛ւր պատկերը, ապա՝ գունատրե՛ գայլ:



Կրնա՞ս լուծել:

## ԼՍԷ՛ ՓՈՔՐԻԿ

*Հեղինակ Գայիանէ Ապերեան*

Լսե՛ փոքրիկ, եթէ մեծնաս  
Եւ աշխարհին դերը իմանաս,  
Չենթարկուիս չարին խօսքին,  
Բարութիւնն է կեանքի ոսկին:

Եթէ մեծ տեսնես ոտքի կանգնիս  
Ու ժպիտով կը մօտենաս,  
Թերեւս կոյր է կամ հաշմանդամ,  
Օգնե՛ անոր, ի՛մ բարեկամ:

Մեծին հանդէպ զիջող եղիր,  
Ծնողներդ յարգե՛, սիրե՛,  
Չէ՛ որ կեանք պարգեւեր են քեզի,  
Գուրգուրացեր ու փայփայեր:

Ընկեր եղի՛ր ազնիւ, սիրե՛  
Ու բարութիւն միշտ գործե՛,  
Որ մեծնաս դուն յարգանքով  
Հպարտանան քու շնորհքով:



Բերանդ միշտ փակ կը պահես,  
Գաղտնիքներդ կը պահպանես,  
Լեզուիդ եկած խօսքը հատու  
Չըսես երբեք ոչ մէկ մարդու:

Բարդ է կեանքը կը սորվիս,  
Ե՛ւ կը յաղթես, ե՛ւ կը պարտուիս,  
Բայց քու դերն ալ այնպէս ըլլայ,  
Որ յետոյ սիրտդ չդողայ:

2ոհ չերթաս գայթակղութեան  
Յանուն կեղծ ընկերութեան,  
Անունդ միշտ մաքուր պահէ,  
Բաց ճակատով մարդոց նայէ:

Խրատներս քեզի մեծ նուեր  
Ի զուր գլուխդ մի՛ մեծցներ,  
Թո՛ղ քեզ գովեն լաւ մարդիկ,  
Իսկ դուն եղի՛ր խիզախ մարտիկ:

Կրնա՞ս գտնել 10 տարբերութիւններ երկու պատկերներուն միջեւ:



# ԹՈՉՈՒՆԸ ԵՒ ՓԻՂԸ

Անտառի մը մէջ, բարձր ծառի վրայ, փոքրիկ բոյն մը կար: Այնտեղ թռչուն մը կ'ապրէր իր ձագուկներով:

Օր մըն ալ, փիղ մը կը մօտենայ եւ գլուխը կը քսէ այդ ծառին: Ծառն ալ կը սկսի երերալ:

Խեղճ թռչնակները խիստ վախցած, դիմելով իրենց մօրը կը բացագանչեն.

- Ո՛հ, մայրիկ, ինչո՞ւ մեր ծառը այսպէս կը ցնցուի: Հապա՞ եթէ յանկարծ իյնանք...

- Փի՛ղ,- կ'ըսէ թռչունը,- կը խնդրեմ, հեռացի՛ր, գնա՛ գլուխդ ուրիշ ծառի մը քսէ՛: Այս ընդարձակ անտառին մէջ շա՛տ ծառեր կան:

Փիղը չի պատասխաներ, միայն պահ մը իր փոքր աչքերով բոյնը կը դիտէ եւ կը հեռանայ:

Սակայն յաջորդ օր փիղը դարձեալ կը վերադառնայ եւ կը սկսի գլուխը քսել նոյն ծառին: Մեծ, հին ծառը կը ցնցուի ու խեղճ թռչնակները նորէն շատ կը վախնան:

Այն ժամանակ մայրը կը պոռայ.

- Փի՛ղ, շո՛ւտ հեռացի՛ր այստեղէն եւ այսուհետեւ մեր ծառին երբեք մի՛ մօտենար, այլապէս շատ պիտի զղջաս:

- Ո՛հ, դո՞ւն, փոքրի՛կ թռչուն,- հեզանքով կը պատասխանէ փիղը,- ողորմելի՛, դուն ի՞նչ



կրնաս ընել ինծի պէս հսկայ կենդանիի մը:

- Համբերե՛՛ եւ կը տեսնես,- կ'ըսէ թռչունը:

Յաջորդ օր փիղը դարձեալ կու գայ եւ այս անգամ գլուխը աւելի զօրաւոր կը քսէ ծառին:

Այն ժամանակ թռչունը ծառէն կ'իջնէ եւ փիղին ականջը կը մտնէ: Փիղը աջ ու ձախ իր գլուխը կը տանի ու կը բերէ, բայց՝ ապարդիւն: Ան կը շարժէ իր մեծ ականջները, սակայն թռչունը այնտեղէն դուրս չի գար:

- Կը խնդրե՛մ, դուրս ե՛լ ականջես, ասկէ վերջ երբեք չեմ մօտենար ծառիդ,- կ'աղաչէ փիղը:

- Ես ալ ժամանակին քեզմէ խնդրեցի հանգիստ ձգել ծառս,- կը պատասխանէ թռչունը,- կատարեցի՛ր իմ խնդրանքը: Ո՛չ, ուրեմն ես ալ հիմա դուրս չեմ ելլեր ականջէդ:

Փիղը խիստ շղայնացած կը շարունակէ շարժել գլուխն ու ականջները: Սակայն անոր բոլոր ջանքերը ապարդիւն կը մնան: Վերջաւորութեան, ուժասպառ, ան գետին կը փռուի եւ կը գոռայ.

- Իմ սիրելի՛ փոքրիկ թռչուն, կը պաղատիմ քեզի, դուրս ե՛լ ականջես: Այնուհետեւ, կեանքիս մէջ, երբեք, երբեք չեմ մօտենար ծառիդ:

Այն ժամանակ թռչունը դուրս կ'ելլէ փիղին ականջէն եւ կը թռչի իր ձագուկներուն մօտ, իսկ փիղն ալ երբեք այդ անտառին չի մօտենար:

## ԱՆՅԱԲԱՏԱԼԻ, ԲԱՅՑ ԻՐԱԲ

\* Ովկիանոսներուն մէջ մօտաւորապէս երեք միլիոն ընկղմած նաւեր կան:

\* Մետաքսի շերամը իր արտադրած մետաքսեայ թելին մօտաւորապէս 0.8 քլմ.-ը կը գործածէ իր բոժոժը շինելու համար:

\* Ո՛չ մէկը գիտէ, թէ ի՛նչ գոյն էին հոյամողեգները:

\* Գիտէի՞ր, որ 16-րդ դարուն Անգլիոյ մէջ բախտաբեր կը սեպուեր հարսանիքներուն ընթացքին հարսին եւ փեսային վրայ կօշիկներ նետելը:

\* Կարելի է գնել 25.000 ամերիկեան տոլար արժող շան տնակներ, որոնք օժտուած են օդփոխիչներով եւ երաժշտութիւն սփռելու դրութեամբ:

\* Գիտէի՞ր, որ Սպանիոյ Սարակոսա շրջանին թաղամասերէն մէկը կը կոչուի «Աւինիտատէ Սուվըր Մարիօ Պրոս» (Սուվըր Մարիօ եղբայրներու պողոտայ), նշանաւոր վիտէօ խաղի հերոսներուն անունով:

